Եվրոպական միության L 108

Պաշտոնական տեղեկագիր

Անգլերեն հրատարակություն **Օրենսդրությունը** **Հատոր 50,**
2007 թվականի ապրիլի 25

Բովանդակություն

I ԵՀ համաձայնագրի/Եվրատոմի համաձայնագրի շրջանակներում ընդունված ակտեր, որոնց հրապարակումը պարտադիր է

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

★ **«Եվրոպական համայնքում Տարածական տեղեկատվության ենթակառուցվածք հիմնադրելու մասին» (ԵՀՏՏԵ [INSPIRE]) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2007 թվականի մարտի 14-ի թիվ 2007/2/ԵՀ հրահանգ** 1

Բաց գույնի տառատեսակով տպագրված անվանումներով ակտերը համարվում են գյուղատնտեսական հարցերի ընթացիկ կառավարմանն առնչվող ակտեր, եւ սովորաբար դրանց վավերականության ժամկետը սահմանափակ է:

Մյուս բոլոր ակտերի անվանումները տպագրված են թավ տառատեսակով, որից առաջ դրված է աստղանիշ:

I

(ԵՀ պայմանագրի/Եվրատոմի պայմանագրի շրջանակներում ընդունված ակտեր, որոնց հրապարակումը պարտադիր է)

ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ԵՎ ԽՈՐՀՐԴԻ 2007 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 14-Ի ԹԻՎ 2007/2/ԵՀ ՀՐԱՀԱՆԳ

Եվրոպական համայնքում Տարածական տեղեկատվության ենթակառուցվածք հիմնադրելու մասին (ԵՀՏՏԵ [INSPIRE])

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՐԼԱՄԵՆՏԸ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ,

հաշվի առնելով «Եվրոպական համայնքի հիմնադրման մասին» պայմանագիրը եւ մասնավորապես՝ դրա 175-րդ հոդվածի 1-ին մասը,

հաշվի առնելով Հանձնաժողովից ստացված առաջարկը,

հաշվի առնելով Տնտեսական եւ սոցիալական հարցերով եվրոպական կոմիտեի եզրակացությունը ([1]),

Տարածաշրջանային հարցերով կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո,

գործելով Պայմանագրի 251-րդ հոդվածով սահմանված ընթացակարգի համաձայն եւ ելնելով Հաշտեցման կոմիտեի կողմից 2007 թվականի հունվարի 17-ին հաստատված համատեղ տեքստից ([2]),

---

[1] ՊՏ C 221, 2005 թվականի սեպտեմբերի 8, էջ 33:

[2] Եվրոպական խորհրդարանի 2005 թվականի հունիսի 7-ի եզրակացություն (ՊՏ C 124 E, 2006 թվականի մայիսի 25, էջ 116), Խորհրդի 2006 թվականի հունվարի 23-ի ընդհանուր դիրքորոշում (ՊՏ C 126 E, 2006 թվականի մայիսի 30, էջ 16) եւ Եվրոպական խորհրդարանի

Քանի որ՝

1) շրջակա միջավայրի վերաբերյալ համայնքային քաղաքականությունը պետք է ուղղված լինի բարձր մակարդակի պաշտպանությանը՝ հաշվի առնելով Համայնքի տարբեր շրջաններում տիրող իրավիճակների բազմազանությունը: Ավելին, այս քաղաքականության եւ Համայնքի քաղաքականության այլ ուղղությունների ձեւավորման ու կիրարկման համար անհրաժեշտ է տեղեկատվություն, այդ թվում՝ տարածական տեղեկատվություն, որը պետք է համախմբի շրջակա միջավայրի պահպանության պահանջները՝ Պայմանագրի 6-րդ հոդվածի համաձայն: Նման համախմբման համար անհրաժեշտ է տեղեկատվության օգտատերերի եւ մատակարարների միջեւ ձեւավորել համակարգման այնպիսի միջոց, որով հնարավոր կլինի համակցել տարբեր ոլորտների տեղեկատվությունն ու գիտելիքները:

2) Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2002 թվականի հուլիսի 22-ի թիվ 1600/2002/ԵՀ որոշմամբ ընդունված «Շրջակա միջավայրի հարցերով վեցերորդ գործողությունների ծրագրով» ([1]) պահանջվում է լիարժեք քննության առնել Համայնքի բնապահպանական քաղաքականության՝ համախմբված եղանակով մշակումն ապահովելու հարցը՝ հաշվի առնելով տարածաշրջանային եւ տեղական տարբերությունները: Առկա են ծրագրով սահմանված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տարածական տեղեկատվության հասանելիության, որակի, կազմակերպման, մատչելիության եւ փոխանցման հետ կապված մի շարք խնդիրներ:

3) Տարածական տեղեկատվության հասանելիության, որակի, կազմակերպման, մատչելիության եւ փոխանցման հետ կապված խնդիրներն ընդհանուր են

2006 թվականի հունիսի 13-ի դիրքորոշում (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չհրապարակված): Խորհրդի 2007 թվականի հունվարի 29-ի որոշում եւ Եվրոպական խորհրդարանի 2007 թվականի փետրվարի 13-ի օրենսդրական բանաձեւ (Պաշտոնական տեղեկագրում դեռևս չհրապարակված):

[1] ՊՏ L 242, 2002 թվականի սեպտեմբերի 10, էջ 1:

քաղաքականությանն առնչվող ու տեղեկատվական մի շարք բաժինների համար եւ հանդիպում են պետական մարմինների տարբեր մակարդակներում: Այդ խնդիրների լուծումը պահանջում է այնպիսի միջոցներ, որոնցով հասցեագրվում են փոխգործունակ տարածական տվյալների եւ տարածական տվյալների ծառայությունների փոխանակման, փոխանցման, մատչելիության եւ օգտագործման հարցերը պետական մարմինների տարբեր մակարդակներում եւ տարբեր ոլորտներում: Հետեւաբար Համայնքում պետք է հիմնադրվի Տարածական տեղեկատվության ենթակառուցվածք:

4) Եվրոպական համայնքում Տարածական տեղեկատվության ենթակառուցվածքը (ԵՀՏՏԵ) պետք է աջակցի քաղաքականության եւ գործունեության այն ուղղությունների մասով քաղաքականության մշակմանը, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

5) ԵՀՏՏԵ-ն պետք է հիմնված լինի տարածական տեղեկատվության այն ենթակառուցվածքների վրա, որոնք ստեղծված են անդամ պետությունների կողմից եւ համատեղելի են կիրարկման ընդհանուր կանոնների հետ ու լրացվում են համայնքային մակարդակում իրականացվող միջոցներով: Այդ միջոցներով պետք է ապահովվի, որ անդամ պետությունների կողմից ստեղծված տարածական տեղեկատվության ենթակառուցվածքները համատեղելի եւ կիրառելի լինեն համայնքային ու անդրսահմանային համատեքստում:

6) Անդամ պետություններում տարածական տեղեկատվության ենթակառուցվածքների նախատեսմամբ պետք է ապահովվի, որ տարածական տվյալները պահվեն, հասանելի դարձվեն ու առավել պատշաճ մակարդակում պահպանվեն, եւ որ հնարավոր լինի հետեւողականորեն համակցել Համայնքի տարբեր աղբյուրներից ստացվող տարածական տվյալներն ու դրանք փոխանցել մի քանի օգտատերերի ու հավելվածների

միջեւ, ինչպես նաեւ հնարավոր լինի մեկ պետական մարմնի մակարդակում հավաքագրված տարածական տվյալները փոխանցել այլ պետական մարմինների միջեւ, եւ որ տարածական տվյալները հասանելի դարձվեն այնպիսի պայմաններով, որոնցով անպատեհ չի սահմանափակվի դրանց լայն օգտագործումը, ինչպես նաեւ հեշտ լինի հայտնաբերել առկա տարածական տվյալները, գնահատել դրանց համապատասխանությունը նպատակին ու իմանալ դրանց օգտագործման նկատմամբ կիրառվող պայմանները:

7) Սույն Հրահանգով կարգավորվող տարածական տեղեկատվությունը եւ «Շրջակա միջավայրին առնչվող տեղեկատվության հանրային մատչելիության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի հունվարի 28-ի թիվ 2003/4/ԵՀ հրահանգով կարգավորվող տեղեկատվությունը որոշ աստիճանով համընկնում են([1]): Սույն Հրահանգը չպետք է հակասի թիվ 2003/4/ԵՀ Հրահանգին:

8) Սույն Հրահանգը չպետք է հակասի «Պետական հատվածի տեղեկատվության վերաօգտագործման մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 2003/98/ԵՀ հրահանգին ([2]), որի նպատակները լրացնում են սույն Հրահանգի նպատակները:

9) Սույն Հրահանգը չպետք է ազդեցություն ունենա պետական մարմինների մտավոր սեփականության իրավունքների առկայության կամ դրանց տնօրինման վրա:

10) ԵՀՏՏԵ-ի հիմնադրումը թե՛ նշանակալի օգտակարություն կունենա եւ թե՛ օգուտ կքաղի Համայնքի այլ այնպիսի նախաձեռնություններից, ինչպիսիք են ««Գալիլեո» համատեղ նախաձեռնության ստեղծման մասին» Խորհրդի 2002 թվականի մայիսի 21-ի թիվ 876/2002 կանոնակարգը (ԵՀ) ([3]) եւ

---

[1] ՊՏ L 41, 2003 թվական փետրվարի 14, էջ. 26:
[2] ՊՏ թիվ L 345, 2003 թվականի դեկտեմբերի 31, էջ 90:
[3] ՊՏ L 138, 2002 թվականի մայիսի 28, էջ 1:

«Շրջակա միջավայրի ու անվտանգության համաշխարհային մոնիթորինգ (ՇՄԱՀՄ[GMES]). մինչեւ 2018 թվականը ՇՄԱՀՄ-ի կարողությունների ձեւավորման (Գործողությունների ծրագիր (2004-2008թթ.)) վերաբերյալ» Հանձնաժողովի հաղորդումը՝ ուղղված Եվրոպական պառլամենտին ու Խորհրդին: Անդամ պետությունները պետք է դիտարկեն «Գալիլեո»-ից եւ ՇՄԱՀՄ-ից ստացվող տվյալների ու ծառայությունների օգտագործման հնարավորությունը դրանց հասանելի դառնալու ժամանակ, մասնավորապես այն տվյալների, որոնք ստացվում են «Գալիլեո»-ից՝ ժամանակի ու տարածության հղմամբ:

11) Ազգային եւ համայնքային մակարդակում իրականացվում են տարածական տեղեկատվություն հավաքագրելու, ներդաշնակեցնելու կամ էլ դրա տարածումը կամ օգտագործումը կազմակերպելու բազմաթիվ նախաձեռնություններ: Նման նախաձեռնությունները կարող են սահմանվել Համայնքի օրենսդրությամբ, ինչպես օրինակ՝ «Աղտոտիչ արտանետումների եվրոպական ռեգիստրի (ԱԱԵՌ) ներդրման մասին» Հանձնաժողովի 2000 թվականի հուլիսի 17-ի թիվ 2000/479/ԵՀ որոշմամբ՝ «Աղտոտման միասնական կանխարգելման եւ վերահսկման մասին (ԱՄԿՎ)» Խորհրդի թիվ 96/61/ԵՀ հրահանգի 15-րդ հոդվածի համաձայն ([1]), եւ «Համայնքում անտառների ու բնապահպանական փոխգործունակության մոնիթորինգի մասին (անտառների ուղղվածություն)» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2003 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 2152/2003 կանոնակարգով (ԵՀ) ([2]), ինչպես նաեւ Համայնքի կողմից ֆինանսավորվող ծրագրերի շրջանակներում (օրինակ՝ հողածածկույթի ՇՄՀՏ [CORINE] համակարգ, Եվրոպական տրանսպորտային քաղաքականության տեղեկատվական համակարգ), կամ կարող են բխել ազգային կամ տարածաշրջանային մակարդակում ձեռնարկված նախաձեռնություններից: Սույն Հրահանգը ոչ

[1] ՊՏ L 192, 2000 թվականի հուլիսի 28, էջ 36):
[2] ՊՏ L 324, 2003 թվականի դեկտեմբերի 11, էջ 1, թիվ 788/2004 (ՊՏ L 138, 2004 թվականի ապրիլի 30, էջ 17) կանոնակարգով (ԵՀ) փոփոխված կանոնակարգ:

միայն կլրացնի նման նախաձեռնությունները՝ ապահովելով այնպիսի շրջանակ, որը նրանց փոխգործունակ դառնալու հնարավորություն կտա, այլեւ կհիմնվի առկա փորձի ու նախաձեռնությունների վրա եւ չի կրկնօրինակի արդեն իսկ կատարված աշխատանքը:

12) Սույն Հրահանգը պետք է կիրառվի պետական մարմինների կողմից կամ նրանց անունից պահվող տարածական տվյալների նկատմամբ եւ պետական մարմինների առջեւ դրված հանրային խնդիրների իրականացման համար դրանց կողմից տարածական տվյալների օգտագործման նկատմամբ: Այնուամենայնիվ, որոշակի պայմաններում այն պետք է կիրառվի նաեւ պետական մարմիններից տարբեր ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից պահվող տարածական տվյալների նկատմամբ՝ այդ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից նման պահանջի առկայության դեպքում:

13) Սույն Հրահանգը չպետք է սահմանի պահանջներ՝ նոր տվյալներ հավաքագրելու կամ նման տեղեկատվությունը Հանձնաժողովին հաղորդելու վերաբերյալ, քանի որ այդ հարցերը կարգավորվում են շրջակա միջավայրին առնչվող այլ օրենսդրությամբ:

14) Ազգային ենթակառուցվածքների կիրարկումը պետք է լինի առաջադեմ, եւ համապատասխանաբար սույն Հրահանգով կարգավորվող տարածական տվյալների համապատասխան բաժիններին պետք է վերագրվեն առաջնահերթության տարբեր մակարդակներ: Կիրարկմամբ պետք է հաշվի առնվեն այն սահմանները, որոնցում տարածական տվյալներն անհրաժեշտ են կիրառման լայն շրջանակի համար քաղաքականության տարբեր ոլորտներում, ինչպես նաեւ պետք է հաշվի առնվեն Համայնքի քաղաքականության ուղղությունների ներքո նախատեսված այն գործողությունների առաջնահերթությունը, որոնց համար պահանջվում են ներդաշնակեցված տարածական տվյալներ, եւ անդամ պետություններում նախաձեռնվող ներդաշնակեցման ջանքերի շնորհիվ արդեն իսկ

արձանագրված առաջընթացը:

15) Հասանելի տվյալների ամբողջական շահագործման համար առանցքային խոչընդոտ են համարվում ժամանակի եւ ռեսուրսների կորուստն առկա տարածական տվյալներ որոնելիս կամ դրանց՝ հատուկ նպատակով օգտագործման հարցը որոշելիս: Անդամ պետությունները, հետեւաբար, պետք է տրամադրեն առկա տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների նկարագրությունը մետատվյալի տեսքով:

16) Քանի որ այնպիսի ձեւաչափերի եւ կառուցվածքների լայն բազմազանությունը, որոնցով տարածական տվյալները կազմակերպվում եւ մատչելի են դառնում Համայնքում, խոչընդոտում է Համայնքի՝ շրջակա միջավայրի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող օրենսդրության արդյունավետ ձեւակերպումը, կիրարկումը, մոնիթորինգը եւ գնահատումը, անհրաժեշտ է նախատեսել կիրարկման միջոցներ՝ անդամ պետություններում տարբեր աղբյուրներից ստացվող տարածական տվյալների օգտագործումը դյուրացնելու համար: Այդ միջոցները պետք է նախատեսված լինեն տարածական տվյալների հավաքածուները փոխգործունակ դարձնելու համար, եւ անդամ պետությունները պետք է ապահովեն, որ փոխգործունակության հասնելու համար անհրաժեշտ ցանկացած տվյալ կամ տեղեկատվություն հասանելի լինի այնպիսի պայմաններով, որոնցով չի սահմանափակվի դրանց օգտագործումն այդ նպատակի համար: Հնարավորության դեպքում կիրարկման կանոնները պետք է հիմնված լինեն միջազգային չափորոշիչների վրա եւ չպետք է առաջացնեն չափազանց մեծ ծախսեր անդամ պետությունների համար:

17) Ցանցային ծառայություններն անհրաժեշտ են Համայնքում պետական մարմինների տարբեր մակարդակների միջեւ տարածական տվյալները փոխանցելու համար: Այդ ցանցային ծառայություններով պետք է հնարավոր դարձվի տարածական տվյալների հայտնաբերումը, վերափոխումը, դիտումը եւ ներբեռնումը, ինչպես նաեւ տարածական տվյալների ու էլեկտրոնային

առեւտրի ծառայությունների կիրառումը: Ցանցի ծառայությունները պետք է գործեն համընդհանուր համաձայնեցված մասնագրերին ու նվազագույն կատարողական չափանիշներին համապատասխան՝ անդամ պետությունների կողմից հիմնադրված ենթակառուցվածքների փոխգործունակությունն ապահովելու համար: Ծառայությունների ցանցը պետք է նաեւ ներառի տեխնիկական հնարավորություն, որով պետական մարմինները կկարողանան հասանելի դարձնել իրենց առկա տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները:

18) Շրջակա միջավայրի վրա ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունեցող՝ Համայնքի քաղաքականության ուղղությունների հետ կապված որոշակի տարածական տվյալների հավաքածուներ ու ծառայություններ պահվում եւ գործարկվում են երրորդ կողմի կողմից: Անդամ պետությունները, հետեւաբար, պետք է երրորդ կողմին առաջարկեն ազգային ենթակառուցվածքներում ներդրում կատարելու հնարավորություն՝ պայմանով, որ դրա հետեւանքով չի խաթարվի այդ ենթակառուցվածքներով նախատեսվող տարածական տվյալների եւ տարածական տվյալների ծառայությունների ամբողջականությունն ու դյուրին օգտագործումը:

19) Անդամ պետություններում փորձը ցույց է տվել, որ տարածական տեղեկատվության ենթակառուցվածքի հաջող կիրարկման համար կարեւոր է հանրության համար նվազագույն թվով ծառայություններ անվճար հիմունքներով հասանելի դարձնելը: Անդամ պետությունները, հետեւաբար, պետք է առնվազն եւ անվճար հիմունքներով հասանելի դարձնեն տարածական տվյալների հավաքածուների հայտնաբերման, իսկ որոշ հատուկ պայմաններում՝ դրանց դիտման ծառայությունները:

20) ԵՀՏՏԵ-ի մեջ ազգային ենթակառուցվածքների ինտեգրմանն աջակցելու համար անդամ պետությունները պետք է ապահովեն իրենց ենթակառուցվածքների մատչելիությունը Հանձնաժողովի կողմից գործարկվող Համայնքի գեոպորտալի, ինչպես նաեւ ցանկացած այնպիսի

մուտքային կետի միջոցով, որն իրենք կորոշեն գործարկել:

21) Պետական մարմինների տարբեր մակարդակներից ստացվող տեղեկատվությունը հասանելի դարձնելու համար անդամ պետությունները պետք է վերացնեն ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում պետական մարմինների կողմից իրենց հանրային խնդիրների իրականացման ժամանակ այդ կապակցությամբ հանդիպող այն գործնական խոչընդոտները, որոնք կարող են ուղղակի կամ անուղղակի ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

22) Պետական մարմինները պետք է ունենան համապատասխան տարածական տվյալների հավաքածուներից ու ծառայություններից անարգել օգտվելու հնարավորություն՝ իրենց առջեւ դրված հանրային խնդիրների իրականացման ընթացքում: Օգտվելու նման հնարավորության համար կարող է խոչընդոտ ստեղծվել, եթե դա կախված է պետական մարմինների միջեւ կոնկրետ դեպքով պայմանավորված (*ad hoc*) առանձին բանակցություններից բոլոր այն դեպքերում, երբ օգտվելու նման հնարավորությունն անհրաժեշտ է: Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ տվյալների փոխանցման գործնական խոչընդոտները կանխարգելելու համար, օրինակ՝ պետական մարմինների միջեւ նախնական համաձայնությունների օգտագործման միջոցով:

23) Շրջակա միջավայրին առնչվող Համայնքի օրենսդրությամբ սահմանված հաշվետու պարտավորությունների կատարման համար պահանջվող տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները միեւնույն անդամ պետության շրջանակներում որեւէ պետական մարմնի կողմից մեկ այլ պետական մարմնի տրամադրելու դեպքում համապատասխան անդամ պետությունը պետք է ազատ լինի որոշելու այդ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների վրա որեւէ գանձում չտարածվելու հարցը: Կառավարության ու այլ պետական կառավարման մարմինների եւ ազգային օրենսդրության շրջանակներում պետական կառավարման

գործառույթներ իրականացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջեւ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման մեխանիզմներով պետք է հաշվի առնվեն պետական մարմինների ֆինանսական կենսունակությունը պաշտպանելու անհրաժեշտությունը, հատկապես այն պետական մարմինների, որոնց նկատմամբ սահմանված է եկամուտ ստանալու պարտավորություն: Ամեն դեպքում, կիրառվող ցանկացած վճար չպետք է գերազանցի հավաքագրման, արտադրության, վերարտադրման ու տարածման արժեքը՝ կատարված ներդրման խելամիտ ծախսածածկման արժեքի հետ միասին:

24) Ցանցային ծառայությունների մատուցումը պետք է իրականացվի անձնական տվյալների պաշտպանությանը վերաբերող սկզբունքների լիարժեք պահպանմամբ՝ «Անձնական տվյալների մշակման եւ այդ տվյալների ազատ տեղաշարժի մասով անհատների պաշտպանության մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1995 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 95/46/ԵՀ հրահանգի համաձայն ([1]):

25) Հրահանգի ուժով փոխանցման պարտավորություն ունեցող պետական մարմինների միջեւ տարածական տվյալների փոխանցմանն առնչվող շրջանակով պետք է չեզոքություն դրսեւորվի ոչ միայն համապատասխան անդամ պետության նման պետական մարմինների նկատմամբ, այլ նաեւ այլ անդամ պետությունների նման պետական մարմինների ու Համայնքի հաստատությունների նկատմամբ: Քանի որ Համայնքի հաստատություններն ու կառույցները հաճախ պետք է համախմբեն եւ գնահատեն բոլոր անդամ պետություններից ստացվող տարածական տեղեկատվությունը, դրանք պետք է կարողանան ձեռք բերել տարածական տվյալներից ու տարածական տվյալների ծառայություններից օգտվելու եւ դրանք օգտագործելու հնարավորություն՝ ներդաշնակեցված պայմաններին համապատասխան:

26) Երրորդ կողմի կողմից հավելյալ ծառայությունների զարգացումը խթանելու

[1] ՊՏ թիվ L 281, 1995 թվականի նոյեմբերի 23, էջ 31: Թիվ 1882/2003 կանոնակարգով (ԵՀ) փոփոխված հրահանգ (ՊՏ L 284, 2003 թվականի հոկտեմբերի 31, էջ 1):

նպատակով անհրաժեշտ է հօգուտ եւ՛ պետական մարմինների, եւ՛ հանրության դյուրացնել այն տարածական տվյալներից օգտվելու հնարավորությունը, որոնք տարածվում են վարչական կամ ազգային սահմանների վրա:

27) Տարածական տեղեկատվության ենթակառուցվածքների արդյունավետ կիրարկման համար պահանջվում է համակարգում բոլոր այն սուբյեկտների կողմից, որոնք թե՛ որպես ներդրողներ, թե՛ որպես օգտատերեր շահագրգռված են այդպիսի ենթակառուցվածքների հիմնադրման հարցում: Հետեւաբար պետք է հիմնադրվեն պատշաճ համակարգման կառույցներ, որոնք կգործեն կառավարման տարբեր մակարդակներում, եւ որոնցով հաշվի կառնվի լիազորությունների ու պարտավորությունների բաշխումն անդամ պետություններում:

28) Տեղեկատվական ենթակառուցվածքների ժամանակակից եւ արդի փորձից օգտվելու համար նպատակահարմար է սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները հիմնավորել միջազգային չափորոշիչներով եւ եվրոպական ստանդարտացման մարմինների կողմից ընդունված չափորոշիչներով՝ «Տեխնիկական չափորոշիչների եւ կանոնակարգերի ոլորտում տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1998 թվականի հունիսի 22-ի թիվ 98/34/ԵՀ հրահանգով սահմանված ընթացակարգին համապատասխան I([1]):

29) Քանի որ «Եվրոպական բնապահպանական գործակալության եւ Եվրոպական բնապահպանական տեղեկատվական ու դիտարկման ցանցի ստեղծման մասին» ([2]) Խորհրդի 1990 թվականի մայիսի 7-ի թիվ 1210/90 կանոնակարգով (ԵՏՀ) հիմնադրված Եվրոպական բնապահպանական

---

[1] ՊՏ L 204, 1998 թվականի հուլիսի 21, էջ 37: Վերջին անգամ 2003 թվականի «Անդամակցության մասին» ակտով փոփոխված հրահանգ:

[2] ՊՏ L 120, 1990 թվականի մայիսի 11, էջ 1: Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի թիվ 1641/2003 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված կանոնակարգ (ՊՏ L 245, 2003 թվականի սեպտեմբերի 29, էջ 1):

գործակալության առջեւ դրված է համայնքային մակարդակում Համայնքին օբյեկտիվ, հուսալի եւ համադրելի բնապահպանական տեղեկատվությամբ ապահովելու խնդիրը, եւ այն, ի թիվս այլնի, նպատակ ունի բարելավելու համապատասխան քաղաքականությանը վերաբերող բնապահպանական տեղեկատվության հոսքն անդամ պետությունների եւ Համայնքի հաստատությունների միջեւ, այն պետք է ակտիվորեն նպաստի սույն Հրահանգի կիրարկմանը:

30) «Բարելավված օրինաստեղծ գործունեության մասին» միջինստիտուցիոնալ համաձայնագրի 34-րդ կետի համաձայն՝ պետք է խրախուսել անդամ պետություններին([1]), իրենց եւ Միության շահերից ելնելով, կազմելու եւ հրապարակելու սույն Հրահանգի ու փոխատեղման միջոցների միջեւ կապը հնարավորինս պատկերող սեփական աղյուսակները:

31) Սույն Հրահանգի կիրարկման համար անհրաժեշտ միջոցները պետք է ընդունվեն «Հանձնաժողովին վերապահված կիրարկման լիազորությունների իրականացման ընթացակարգերը սահմանող» Խորհրդի 1999 թվականի հունիսի 28-ի թիվ 1999/468/ԵՀ որոշմանը համապատասխան ([2]):

32) Մասնավորապես, Հանձնաժողովը պետք է լիազորված լինի ճշգրտել I, II եւ III Հավելվածներով նախատեսված՝ առկա տվյալների բաժինների նկարագրությունը: Քանի որ նշված միջոցներն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար, դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ Որոշման 5-րդ հոդվածի «ա» մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

33) Հանձնաժողովը պետք է նաեւ լիազորված լինի ընդունել տարածական

[1] ՊՏ C 321, 2003 թվականի դեկտեմբերի 31, էջ 1:
[2] ՊՏ L 184, 1999 թվականի հուլիսի 17, էջ 23: Թիվ 2006/512/ԵՀ որոշմամբ փոփոխված որոշում (ՊՏ L 200, 2006 թվականի հուլիսի 22, էջ 11):

տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխգործունակության եւ ներդաշնակեցման համար տեխնիկական կարգավորումներ սահմանող կիրարկման կանոններ, այդ հավաքածուներից ու ծառայություններից օգտվելուն առնչվող պայմանները կարգավորող կանոններ, ինչպես նաեւ ցանցային ծառայությունների տեխնիկական բնութագրերի ու պարտավորությունների վերաբերյալ կանոններ: Քանի որ նման միջոցներն ընդհանուր բնույթ են կրում եւ նախատեսված են նոր, ոչ էական տարրերով համալրելու միջոցով սույն Հրահանգում լրացում կատարելու համար, դրանք պետք է ընդունվեն թիվ 1999/468/ԵՀ Որոշման 5-րդ հոդվածի «ա» մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

34) Սույն Հրահանգի կիրարկմանը վերաբերող որոշումներին եւ ԵՀՏՏԵ-ի հետագա զարգացմանն առնչվող նախապատրաստական աշխատանքը պահանջում է Հրահանգի կիրարկման շարունակական մոնիթորինգի իրականացում եւ պարբերաբար հաշվետվության ներկայացում:

35) Քանի որ սույն Հրահանգի նպատակը, այն է՝ ԵՀՏՏԵ-ի հիմնադրումը, չի կարող բավարար չափով իրագործվել անդամ պետությունների կողմից՝ ելնելով որոշ անդրազգային նկատառումներից, ինչպես նաեւ Համայնքում տարածական տեղեկատվությունից օգտվելու, այն փոխանակելու եւ փոխանցելու պայմանների համակարգման ընդհանուր անհրաժեշտությունից, եւ որ այն կարող է ավելի լավ իրագործվել համայնքային մակարդակում, Համայնքը կարող է միջոցներ սահմանել լրացուցչության սկզբունքին համապատասխան՝ Պայմանագրի 5-րդ հոդվածով նախատեսված կարգով: Այդ հոդվածով նախատեսված համաչափության սկզբունքի համաձայն՝ սույն Հրահանգով չի կատարվում այդ նպատակի իրագործման համար անհրաժեշտ միջոցների սահմանազանցում:

ԸՆԴՈՒՆԵՑԻՆ ՍՈՒՅՆ ՀՐԱՀԱՆԳԸ.

ԳԼՈՒԽ I

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1

1. Սույն Հրահանգի նպատակն է սահմանել ընդհանուր կանոններ՝ ուղղված Եվրոպական համայնքում Տարածական տեղեկատվության ենթակառուցվածքի (այսուհետ՝ ԵՀՏՏԵ) հիմնադրմանը՝ Համայնքի բնապահպանական քաղաքականության ուղղություններով եւ այն քաղաքականության կամ գործունեության ուղղություններով նախատեսված նպատակների համար, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

2. ԵՀՏՏԵ-ն պետք է հիմնվի անդամ պետությունների կողմից հիմնադրված եւ գործարկվող տարածական տեղեկատվության ենթակառուցվածքների վրա:

Հոդված 2

1. Սույն Հրահանգը չի հակասում թիվ 2003/4/ԵՀ եւ թիվ 2003/98/ԵՀ Հրահանգներին:

2. Սույն Հրահանգը չի ազդում պետական մարմինների մտավոր սեփականության իրավունքների առկայության կամ դրանց տնօրինման վրա:

Հոդված 3

Սույն Հրահանգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

1. «տարածական տեղեկատվության ենթակառուցվածք» նշանակում է մետատվյալներ, տարածական տվյալների հավաքածուներ եւ տարածական տվյալների ծառայություններ, ցանցային ծառայություններ եւ տեխնոլոգիաներ, դրանք փոխանցելու, դրանցից օգտվելու եւ դրանք օգտագործելու մասին համաձայնագրեր, ինչպես նաեւ համակարգման եւ մոնիթորինգի մեխանիզմներ, գործընթացներ ու ընթացակարգեր, որոնք ստեղծվում, գործարկվում կամ հասանելի են դարձվում սույն Հրահանգին համապատասխան.

2. «տարածական տվյալներ» նշանակում է ցանկացած տվյալ, որով ուղղակի կամ անուղղակի հղում է կատարվում որոշակի վայրի կամ աշխարհագրական տարածքի.

3. «տարածական տվյալների հավաքածու» նշանակում է տարածական տվյալների նույնականացվող հավաքածու.

4. «տարածական տվյալների ծառայություններ» նշանակում է գործողություններ, որոնք կարող են իրականացվել համակարգչային հավելվածի կիրառմամբ՝ տարածական տվյալների հավաքածուներում կամ հարակից մետատվյալներում ներառված տարածական տվյալների նկատմամբ.

5. «տարածական օբյեկտ» նշանակում է որոշակի վայրի կամ աշխարհագրական տարածքի հետ կապված իրական երեւույթի վերացական ներկայացում.

6. «մետատվյալներ» նշանակում է տեղեկատվություն, որով նկարագրվում են տարածական տվյալների հավաքածուներ եւ տարածական տվյալների ծառայություններ, եւ հնարավոր են դառնում դրանց հայտնաբերումը, գույքագրումն ու օգտագործումը.

7. «փոխգործունակություն» նշանակում է տարածական տվյալների հավաքածուների համակցման հնարավորություն, իսկ ծառայությունների

դեպքում՝ փոխազդեցություն՝ առանց կրկնվող մեխանիկական միջամտության այնպես, որ արդյունքը լինի համաձայնեցված, եւ տվյալների հավաքածուների ու ծառայությունների օգտակարությունն ավելանա.

8. «ԵՀՏՏԵ գեոպորտալ» նշանակում է համացանցային կայք կամ համարժեք գործիք, որով ապահովվում է 11-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ծառայություններից օգտվելու հնարավորությունը.

9. «շահագրգիռ մարմին» նշանակում է՝

ա) ցանկացած կառավարություն կամ պետական կառավարման մարմին, այդ թվում՝ պետական խորհրդատվական մարմիններ՝ ազգային, տարածաշրջանային կամ տեղական մակարդակներում.

բ) ազգային օրենսդրության շրջանակներում պետական կառավարման գործառույթներ, այդ թվում՝ շրջակա միջավայրի նկատմամբ հատուկ պարտավորություններ, գործունեություն կամ ծառայություններ իրականացնող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

գ) պետական պարտավորություններ կամ գործառույթներ ունեցող կամ էլ «ա» կամ «բ» մասերով նախատեսված մարմնի կամ անձի վերահսկողության ներքո շրջակա միջավայրի հետ կապված պետական ծառայություններ մատուցող որեւէ ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

Անդամ պետությունները կարող են ապահովել, որ համապատասխան կառույցները կամ հաստատություններն իրենց դատական կամ օրենսդիր իրավազորության շրջանակներում գործելու ժամանակ չդիտարկվեն որպես պետական մարմին սույն Հրահանգի նպատակներով.

10. «երրորդ կողմ» նշանակում է պետական մարմնից տարբեր՝ ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ:

Հոդված 4

1. Սույն Հրահանգը տարածվում է այն տարածական տվյալների հավաքածուների վրա, որոնք բավարարում են հետեւյալ պայմանները՝

   ա) առնչվում են այնպիսի ոլորտի, որում անդամ պետությունն օժտված է կամ իրականացնում է իրավազորությունից բխող իրավունքներ,

   բ) կազմված են էլեկտրոնային ձեւաչափով,

   գ) պահվում են հետեւյալ սուբյեկտներից որեւէ մեկի կողմից կամ անունից.

      (i) պետական մարմին, որը ստեղծվել է մեկ այլ պետական մարմնի կողմից կամ ձեւավորվել է դրանից կամ էլ ղեկավարվել կամ թարմացվել է դրա կողմից եւ գործում է դրա առջեւ դրված հանրային խնդիրների շրջանակներում.

      (ii) երրորդ կողմ, որի համար ցանցը հասանելի է դարձվել 12-րդ հոդվածի համաձայն.

   դ) վերաբերում են I, II կամ III Հավելվածում թվարկված մեկ կամ ավելի բաժինների:

2. Այն դեպքերում, երբ միեւնույն տարածական տվյալների բազմաթիվ նույնական պատճենները պահվում են տարբեր պետական մարմինների կողմից կամ դրանց անունից, սույն Հրահանգը կիրառվում է միայն այն հղված տարբերակի նկատմամբ, որից բխում են տարբեր պատճենները:

3. Սույն Հրահանգը տարածվում է նաեւ 1-ին մասով նախատեսված տարածական տվյալների հավաքածուներում ներառված տվյալների հետ կապված տարածական տվյալների ծառայությունների վրա:

4. Սույն Հրահանգով չի պահանջվում նոր տարածական տվյալների հավաքագրում:

5. Տարածական տվյալների հավաքածուների դեպքում, որոնք բավարարում են 1-ին մասի «գ» կետով նախատեսված պայմանը, սակայն որոնց նկատմամբ երրորդ կողմն ունի մտավոր սեփականության իրավունքներ, պետական մարմինը կարող է սույն Հրահանգի ներքո քայլեր ձեռնարկել միայն այդ երրորդ կողմի համաձայնությամբ:

6. Շեղում կատարելով 1-ին մասից՝ սույն Հրահանգը տարածվում է անդամ պետությունում կառավարման ամենացածր մակարդակում գործող պետական մարմնի կողմից կամ դրա անունից պահվող տարածական տվյալների հավաքածուների վրա միայն այն դեպքում, երբ անդամ պետությունում գործում են այնպիսի օրենքներ կամ կանոնակարգեր, որոնցով պահանջում է դրանց հավաքագրումը կամ տարածումը:

7. I, II եւ III Հավելվածներով սահմանված առկա տվյալների բաժինների նկարագրությունը կարող է ճշգրտվել 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան՝ հաշվի առնելու համար տարածական տվյալների աճող կարիքները՝ ի հիմնավորումն համայնքային քաղաքականության այն ուղղությունների, որոնք ազդեցություն են գործում շրջակա միջավայրի վրա:

ԳԼՈՒԽ II

ՄԵՏԱՏՎՅԱԼՆԵՐ

Հոդված 5

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ մետատվյալները ստեղծվեն I, II եւ III Հավելվածներում թվարկված բաժիններին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների համար, եւ որ այդ մետատվյալները թարմացվեն:

2. Մետատվյալները ներառում են տեղեկատվություն հետեւյալի մասին.

   ա) տարածական տվյալների հավաքածուների համապատասխանությունը 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կիրարկման կանոններին,

   բ) տարածական տվյալների հավաքածուներից ու ծառայություններից օգտվելու եւ դրանք օգտագործելու, իսկ կիրառելիության դեպքում՝ համապատասխան վճարների նկատմամբ կիրառվող պայմանները,

   գ) տարածական տվյալների հավաքածուների որակն ու վավերականությունը,

   դ) տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների ստեղծման, կառավարման, պահպանման եւ բաշխման համար պատասխանատու պետական մարմինները,

   ե) հանրային մատչելիության սահմանափակումներն ու այդպիսի սահմանափակումների հիմքերը՝ 13-րդ հոդվածի համաձայն:

3. Անդամ պետությունները պետք է ձեռնարկեն անհրաժեշտ միջոցներ՝ մետատվյալների ամբողջականությունն ու բավարար որակն ապահովելու համար՝ ուղղված 3-րդ հոդվածի 6-րդ կետով սահմանված նպատակների իրագործմանը:

4. Սույն հոդվածի կիրարկման կանոնները պետք է ընդունվեն մինչեւ 2008 թվականի մայիսի 15-ը՝ 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Այդ կանոններով պետք է հաշվի առնվեն համապատասխան առկա միջազգային չափորոշիչները եւ օգտատիրոջ պահանջները, մասնավորապես՝ մետատվյալների վավերականության հաստատման առնչությամբ:

Հոդված 6

Անդամ պետությունները 5-րդ հոդվածով նախատեսված մետատվյալները պետք է ստեղծեն ըստ հետեւյալ ժամանակացույցի.

ա) կիրարկման կանոնների ընդունման օրվանից ոչ ուշ, քան երկու տարի հետո՝ 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ I եւ II Հավելվածներում թվարկված բաժիններին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների դեպքում.

բ) կիրարկման կանոնների ընդունման օրվանից ոչ ուշ, քան հինգ տարի հետո՝ 5-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ III Հավելվածում թվարկված բաժիններին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների դեպքում:

ԳԼՈՒԽ III

ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 7

1. Փոխգործունակության, իսկ հնարավորության դեպքում՝ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների ներդաշնակեցման համար տեխնիկական կարգավորումներ սահմանող կիրարկման կանոնները, որոնք նախատեսված են սույն Հրահանգի ոչ էական տարրերը փոփոխելու համար՝ դրանում լրացում կատարելու միջոցով, պետք է ընդունվեն 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Կիրարկման կանոնների մշակման ժամանակ հաշվի են առնվում տարածական տվյալների հավաքածուների ներդաշնակեցման համար անհրաժեշտ օգտատերերի համապատասխան պահանջները, առկա նախաձեռնությունները եւ միջազգային չափորոշիչները, ինչպես նաեւ իրագործելիության եւ «ծախս-օգուտ» վերլուծության նկատառումները: Տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխգործունակությունը կամ ներդաշնակեցումն ապահովելու նպատակով միջազգային իրավունքի շրջանակներում հիմնադրված կազմակերպությունների կողմից համապատասխան չափորոշիչներ ընդունելու դեպքում այդ չափորոշիչները ներդրվում են, իսկ անհրաժեշտության դեպքում՝ գործող տեխնիկական միջոցներին հղում է կատարվում սույն մասով նախատեսված կիրարկման կանոններում:

2. Որպես 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոններ մշակելու հիմք՝ Հանձնաժողովն իրականացնում է վերլուծություն՝ կանոնների իրագործելի ու

համաչափ բնույթն ապահովելու համար՝ դրանց հավանական «ծախս-օգուտ» վերլուծության տեսանկյունից, ինչպես նաեւ նման վերլուծության արդյունքները տրամադրում է 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կոմիտեին: Անդամ պետությունները պահանջի դեպքում Հանձնաժողովին տրամադրում են անհրաժեշտ տեղեկատվություն՝ նման վերլուծություն իրականացնելու հնարավորություն ընձեռելու համար:

3. Անդամ պետությունները պետք է ապահովեն բոլոր նոր հավաքագրված եւ լայնորեն վերակազմավորված տարածական տվյալների հավաքածուների ու համապատասխան տարածական տվյալների ծառայությունների հասանելիությունը՝ 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոններին համապատասխան՝ դրանց ընդունումից հետո՝ երկու տարվա ընթացքում, եւ դեռեւս օգտագործվող այլ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների հասանելիությունը՝ կիրարկման կանոններին համապատասխան՝ դրանց ընդունումից հետո՝ յոթ տարվա ընթացքում: Տարածական տվյալների հավաքածուները պետք է հասանելի դարձվեն կիրարկման կանոններին համապատասխան կա՛մ առկա տարածական տվյալների հավաքածուների ճշգրտման, կա՛մ 11-րդ հոդվածի 1-ին մասի «դ» կետով նախատեսված վերափոխման ծառայությունների միջոցով:

4. 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոնները տարածվում են տարածական տվյալների հավաքածուների հետ կապված տարածական օբյեկտների բնորոշման ու դասակարգման վրա՝ I, II կամ III Հավելվածներում թվարկված բաժիններին համապատասխան, ինչպես նաեւ այդ տարածական տվյալներին աշխարհագրական հղում կատարելու եղանակի վրա:

5. Անդամ պետությունների ներկայացուցիչներն ազգային, տարածաշրջանային եւ տեղական մակարդակներում, ինչպես նաեւ տարածական տեղեկատվության ենթակառուցվածքներում իրենց ունեցած դերակատարման ուժով տվյալ տարածական տվյալների մասով

շահագրգռված այլ ֆիզիկական կամ իրավաբանական անձինք, այդ թվում՝ օգտատերերը, արտադրողները, հավելյալ ծառայություններ մատուցողները կամ ցանկացած համակարգող մարմին պետք է հնարավորություն ունենան մասնակցելու 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոնների բովանդակության վերաբերյալ նախապատրաստական քննարկումներին՝ նախքան 22-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված՝ Հանձնաժողովի կողմից քննության առնելը:

Հոդված 8

1. I կամ II Հավելվածում թվարկված բաժիններից մեկին կամ մի քանիսին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների դեպքում 7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոնները պետք է բավարարեն սույն հոդվածի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մասերով սահմանված պայմանները:

2. Կիրարկման կանոններով պետք է հասցեագրվեն տարածական տվյալների հետեւյալ ասպեկտները.

   ա) տարածական օբյեկտների ինքնատիպ նույնականացման ընդհանուր շրջանակը, որի հիման վրա ազգային համակարգի ներքո նույնացուցիչները կարող են քարտեզագրվել՝ դրանց միջեւ փոխգործունակություն ապահովելու համար.

   բ) տարածական օբյեկտների միջեւ կապը.

   գ) շրջակա միջավայրի վրա հավանական ազդեցություն ունեցող քաղաքականության ուղղությունների համար սովորաբար պահանջվող առանցքային հատկանիշները եւ համապատասխան բազմալեզու բառապաշարը.

   դ) տվյալների ժամանակային չափման վերաբերյալ տեղեկատվությունը.

ե) տվյալների թարմացումը:

3. Կիրարկման կանոնները պետք է նախատեսված լինեն միեւնույն վայրին վերաբերող տեղեկատվության տարրերի միջեւ կամ տարբեր մասշտաբներով ներկայացված միեւնույն օբյեկտին վերաբերող տեղեկատվության տարրերի միջեւ համապատասխանություն ապահովելու համար:

4. Կիրարկման կանոնները պետք է նախատեսված լինեն տարբեր տարածական տվյալների հավաքածուներից ստացվող տեղեկատվության համադրելիությունն ապահովելու համար՝ 7-րդ հոդվածի 4-րդ մասով եւ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված ասպեկտների մասով:

Հոդված 9

7-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված կիրարկման կանոններն ընդունվում են ըստ հետեւյալ ժամանակացույցի՝

ա) ոչ ուշ, քան մինչեւ 2009 թվականի մայիսի 15-ը՝ I Հավելվածում թվարկված բաժիններին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների դեպքում.

բ) ոչ ուշ, քան մինչեւ 2012 թվականի մայիսի 15-ը՝ II կամ III Հավելվածում թվարկված բաժիններին համապատասխանող տարածական տվյալների հավաքածուների դեպքում:

Հոդված 10

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կիրարկման կանոնների պահպանման համար անհրաժեշտ ցանկացած տեղեկատվություն, այդ թվում՝ տվյալներ, ծածկագրեր եւ տեխնիկական դասակարգումներ, հասանելի դարձվեն պետական

մարմիններին կամ երրորդ կողմին այնպիսի պայմաններով, որոնցով չի սահմանափակվի դրանց կիրառումն այդ նպատակով:

2. Նպատակ ունենալով ապահովել աշխարհագրական հատկանիշներին վերաբերող այն տարածական տվյալների համաձայնեցվածությունը, որոնց տեղակայվածությունն ընդգրկում է երկու կամ ավելի անդամ պետությունների միջեւ սահմանները՝ անդամ պետություններն անհրաժեշտության դեպքում փոխադարձ համաձայնությամբ որոշում են այդ ընդհանուր հատկանիշների նկարագրությունն ու դիրքը:

ԳԼՈՒԽ IV

ՑԱՆՑԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հոդված 11

1. Անդամ պետությունները ստեղծում եւ վարում են տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների համար հետեւյալ այնպիսի ծառայությունների ցանց, որոնց համար ստեղծվել են մետատվյալներ՝ սույն Հրահանգին համապատասխան.

   ա) հայտնաբերման ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս որոնել տարածական տվյալների հավաքածուներ ու ծառայություններ՝ համապատասխան մետատվյալների բովանդակության հիման վրա, եւ ցուցադրել մետատվյալների բովանդակությունը.

   բ) դիտման ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս առնվազն ցուցադրել, տեղորոշել, խոշորացնել/փոքրացնել,

համայնապատկերել կամ տեղադրել դիտելի տարածական տվյալների հավաքածուները եւ ցուցադրել պայմանական տեղեկատվությունն ու ցանկացած մետատվյալի համապատասխան բովանդակությունը.

գ) ներբեռնման ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս տարածական տվյալների հավաքածուների կամ այդպիսի հավաքածուների առանձին հատվածների պատճենները ներբեռնել ու հնարավորության դեպքում՝ դրանցից անմիջականորեն օգտվել.

դ) վերափոխման ծառայություններ, որոնք հնարավորություն են տալիս տարածական տվյալների հավաքածուները վերափոխել՝ փոխգործունակություն ապահովելու նպատակով.

ե) տարածական տվյալների կիրառում թույլատրող ծառայություններ:

Այդ ծառայություններով պետք է հաշվի առնվեն համապատասխան օգտատերերի պահանջները, եւ դրանք պետք է լինեն դյուրին օգտագործման համար, հասանելի՝ հանրության համար եւ մատչելի՝ համացանցով կամ հեռահաղորդակցության ցանկացած այլ պատշաճ միջոցներով:

2. 1-ին մասի «ա» կետում նշված ծառայությունների նպատակով կիրարկվում է որոնման չափանիշների առնվազն հետեւյալ համակցությունը՝

ա) հիմնաբառեր.

բ) տարածական տվյալների ու ծառայությունների դասակարգում.

գ) տարածական տվյալների հավաքածուների որակ եւ վավերականություն.

դ) 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կիրարկման կանոններին համապատասխանության աստիճան.

ե) աշխարհագրական տեղակայվածություն.

զ) տարածական տվյալների հավաքածուներից ու ծառայություններից օգտվելու եւ դրանք օգտագործելու նկատմամբ կիրառվող պայմաններ.

է) տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների ստեղծման, կառավարման, պահպանման եւ բաշխման համար պատասխանատու պետական մարմիններ:

3. 1-ին մասի «դ» կետով նախատեսված վերափոխման ծառայությունները պետք է համակցվեն այդ մասով սահմանված մյուս ծառայությունների հետ այնպես, որ բոլոր այդ ծառայությունները հնարավոր լինի գործարկել 7-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կիրարկման կանոններին համապատասխան:

Հոդված 12

Անդամ պետությունները պետք է ապահովեն, որ պետական մարմիններին տրամադրվի իրենց տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները 11-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ցանցին կապակցելու տեխնիկական հնարավորություն: Այս ծառայությունը պետք է պահանջի դեպքում հասանելի դարձվի նաեւ այն երրորդ կողմին, որի տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայությունները համապատասխանում են մասնավորապես մետատվյալների, ցանցային ծառայությունների եւ փոխգործունակության մասով պարտավորություններ սահմանող կիրարկման կանոններին:

Հոդված 13

1. Շեղում կատարելով 11-րդ հոդվածի 1-ին մասից՝ անդամ պետությունները կարող են սահմանափակել տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների հանրային մատչելիությունը 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա»

կետով նախատեսված ծառայությունների միջոցով, եթե այդպիսի մատչելիությունը կարող է բացասաբար անդրադառնալ միջազգային հարաբերությունների, հանրային անվտանգության կամ պետական պաշտպանության վրա:

Շեղում կատարելով 11-րդ հոդվածի 1-ին մասից՝ անդամ պետությունները կարող են սահմանափակել տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների հանրային մատչելիությունը՝ 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ»-ից «ե» կետերով նախատեսված ծառայությունների միջոցով, կամ էլ 14-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված էլեկտրոնային առեւտրի ծառայությունների հանրային մատչելիությունը, եթե այդպիսի մատչելիությունը կարող է բացասաբար անդրադառնալ հետեւյալներից որեւէ մեկի վրա՝

ա) պետական մարմինների վարույթների գաղտնիություն, եթե այդպիսի գաղտնիությունը նախատեսված է օրենքով.

բ) միջազգային հարաբերություններ, հանրային անվտանգություն կամ պետական պաշտպանություն.

գ) արդարադատության իրականացման գործընթաց, ցանկացած անձի՝ արդար դատաքննություն ստանալու հնարավորություն կամ պետական մարմնի՝ քրեական կամ կարգապահական վարույթով հարցաքննություն իրականացնելու հնարավորություն.

դ) առեւտրային կամ արդյունաբերական տեղեկատվության գաղտնիություն, եթե նման գաղտնիությունը սահմանված է ազգային կամ Համայնքի օրենսդրությամբ՝ ուղղված օրինական տնտեսական շահի, այդ թվում՝ վիճակագրական գաղտնիության եւ հարկային գաղտնիքի պահպանման հարցում հանրային շահի պաշտպանությանը.

ե) մտավոր սեփականության իրավունքներ.

զ) ֆիզիկական անձին վերաբերող անձնական տվյալների եւ/կամ փաստաթղթերի գաղտնիություն, եթե այդ անձը չի համաձայնել այդ տեղեկատվությունը հանրամատչելի դարձնել՝ այդպիսի գաղտնիությունը ազգային կամ Համայնքի օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում.

է) ցանկացած այնպիսի անձի շահ կամ ցանկացած այնպիսի անձի պաշտպանություն, որը հայցվող տեղեկատվությունը տրամադրել է կամավոր հիմունքներով՝ առանց այդպես գործելու իրավական պարտավորության կամ պարտավորություն ունենալու հնարավորության, եթե տվյալ անձը չի տվել քննարկվող տեղեկատվությունը տարածելու համաձայնություն.

ը) շրջակա միջավայրի պաշտպանություն, որին վերաբերում է տվյալ տեղեկատվությունը, ինչպես օրինակ՝ հազվագյուտ տեսակների տեղակայվածությունը:

2. 1-ին մասով սահմանված մատչելիության սահմանափակման հիմքերը պետք է մեկնաբանվեն սահմանափակող եղանակով՝ հաշվի առնելով այն մասնավոր դեպքերը, որոնցում այդ մատչելիությունն ապահովվում է՝ հետապնդելով հանրային շահ: Յուրաքանչյուր մասնավոր դեպքում [տեղեկատվության] բացահայտման դեպքում հետապնդվող հանրային շահը պետք է հակակշռվի այն շահին, որը հետապնդվում է մատչելիության սահմանափակման կամ մատչելիությունը որոշակի հանգամանքներով պայմանավորելու դեպքում: Անդամ պետություններն 1-ին մասի «ա», «դ», «զ», «է» եւ «ը» կետերի ուժով չեն կարող սահմանափակել շրջակա միջավայրում արտանետումների մասին տեղեկատվությունից օգտվելու հնարավորությունը:

3. Այս շրջանակներում եւ 1-ին մասի «զ» կետի կիրառման նպատակներից ելնելով՝ անդամ պետությունները պետք է ապահովեն թիվ 95/46/ԵՀ Հրահանգի պահանջների կատարումը:

Հոդված 14

1. Անդամ պետությունները պետք է ապահովեն 11-րդ հոդվածի 1-ին մասի «ա» եւ «բ» կետերով նախատեսված ծառայությունների՝ հանրության համար հասանելիությունն անվճար հիմունքներով:

2. Շեղում կատարելով 1-ին մասից՝ անդամ պետությունները կարող են 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված ծառայություններ մատուցող պետական մարմիններին թույլատրել գանձել վճարներ, եթե այդ վճարներով ապահովվում է տարածական տվյալների հավաքածուների եւ համապատասխան տվյալների ծառայությունների պահպանումը հատկապես այն դեպքերում, որոնք ներառում են հաճախակի թարմացվող տվյալների մեծ ծավալներ:

3. 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ» կետով նախատեսված դիտման ծառայությունների միջոցով հասանելի դարձված տվյալները կարող են կազմված լինել առեւտրային նպատակներով դրանց վերաօգտագործումը կանխարգելող ձեւով:

4. Պետական մարմինների կողմից 11-րդ հոդվածի 1-ին մասի «բ», «գ» կամ «ե» կետերով նախատեսված ծառայությունների համար վճարներ գանձելու դեպքում անդամ պետությունները պետք է ապահովեն էլեկտրոնային առեւտրի ծառայությունների հասանելիությունը: Նման ծառայությունները կարող են նախատեսվել հրաժարումների, քլիք արտոնագրերի կամ անհրաժեշտության դեպքում՝ արտոնագրերի միջոցով:

Հոդված 15

1. Հանձնաժողովը պետք է հիմնադրի եւ գործարկի ԵՀՏՏԵ-ի գեոպորտալ՝ համայնքային մակարդակում:

2. Անդամ պետությունները պետք է ապահովեն 11-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսած ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ 1-ին մասով նախատեսված ԵՀՏՏԵ-ի գեոպորտալի միջոցով: Անդամ պետությունները կարող են նաեւ ապահովել այդ ծառայություններից օգտվելու հնարավորություն՝ իրենց սեփական մուտքային կետերի միջոցով:

Հոդված 16

Այն կիրարկման կանոնները, որոնք նախատեսված են սույն գլխի ոչ էական տարրերը փոփոխելու համար՝ դրանում լրացում կատարելու միջոցով, պետք է ընդունվեն 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան, եւ պետք է մասնավորապես սահմանեն հետեւյալը՝

ա) 11-րդ եւ 12-րդ հոդվածներով նախատեսված ծառայությունների մասով տեխնիկական մասնագրերն ու այդ ծառայությունների մասով նվազագույն կատարողական չափանիշները՝ հաշվի առնելով հաշվետվողականությանը ներկայացվող առկա պահանջները եւ Համայնքի բնապահպանական օրենսդրության շրջանակներում ընդունված առաջարկությունները, գործող էլեկտրոնային առեւտրի ծառայություններն ու տեխնոլոգիական առաջընթացը.

բ) 12-րդ հոդվածով նախատեսված պարտավորությունները:

ԳԼՈՒԽ V

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ

Հոդված 17

1. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է միջոցներ սահմանի 3-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» եւ «բ» կետերով նախատեսված իր պետական մարմինների միջեւ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման վերաբերյալ: Այդ պետական մարմինները պետք է այդ միջոցների ուժով կարողանան ձեռք բերել տարածական տվյալների հավաքածուներից ու ծառայություններից օգտվելու եւ այդ հավաքածուներն ու ծառայությունները փոխանակելու ու դրանք օգտագործելու հնարավորություն՝ ուղղված այնպիսի հանրային խնդիրների իրագործման նպատակներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

2. 1-ին մասով նախատեսված միջոցներով արգելվում է ցանկացած այնպիսի սահմանափակում, որն ունի տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման նկատմամբ գործնական այնպիսի խոչընդոտներ ստեղծելու հավանականություն, որոնք առաջանում են օգտագործման փուլում:

3. Անդամ պետությունները տարածական տվյալների հավաքածուներ ու ծառայություններ տրամադրող պետական մարմիններին կարող են թույլատրել արտոնագրել դրանք եւ/կամ պահանջել վճարներ այդ տարածական տվյալների հավաքածուներն ու ծառայություններն օգտագործող պետական մարմիններից կամ հաստատություններից եւ Համայնքի կառույցներից: Ցանկացած նման վճար եւ արտոնագիր պետք է լիովին համապատասխանի պետական մարմինների միջեւ տարածական

տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցումը դյուրացնելու ընդհանուր նպատակին: Վճարներ գանձելու դեպքում դրանք պետք է սահմանվեն այն նվազագույն չափով, որն անհրաժեշտ է տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների անհրաժեշտ որակն ու մատակարարումն ապահովելու համար՝ կատարված ներդրման խելամիտ ծախսածածկման հետ միասին՝ կիրառելիության դեպքում պահպանելով տարածական տվյալների հավաքածուներ ու ծառայություններ մատակարարող պետական մարմինների ինքնաֆինանսավորման պահանջները: Շրջակա միջավայրի վերաբերյալ Համայնքի օրենսդրության շրջանակներում իրենց հաշվետվողականության պարտավորությունները կատարելու նպատակով անդամ պետությունների կողմից Համայնքի հաստատություններին ու կառույցներին տրամադրվող տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների նկատմամբ որեւէ գանձում չի տարածվում:

4. 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման կարգավորումները պետք է լինեն բաց՝ 3-րդ հոդվածի 9-րդ մասի «ա» եւ «բ» կետերով նախատեսված մյուս անդամ պետությունների պետական մարմինների եւ Համայնքի հաստատությունների ու կառույցների համար՝ ուղղված այնպիսի հանրային խնդիրների իրագործման նպատակներին, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

5. 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման կարգավորումները պետք է փոխադարձ եւ համարժեք հիմունքներով բաց լինեն այն միջազգային համաձայնագրերով հիմնադրված կառույցների համար, որոնց կողմ են հանդիսանում Համայնքն ու անդամ պետությունները՝ ելնելով այնպիսի հանրային խնդիրների իրագործման նպատակներից, որոնք կարող են ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

6. Այն դեպքերում, երբ 1-ին, 2-րդ եւ 3-րդ մասերով սահմանված տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների փոխանցման կարգավորումները հասանելի են դարձվում 4-րդ եւ 5-րդ մասերի համաձայն, այդ կարգավորումները կարող են ուղեկցվել դրանց օգտագործումը պայմանավորող ազգային օրենսդրության պահանջներով:

7. Շեղում կատարելով սույն հոդվածից՝ անդամ պետությունները կարող են սահմանափակել փոխանցումը, եթե դա վտանգում է արդարադատության իրականացման գործընթացը, հանրային անվտանգությունը, պետական պաշտպանությունը կամ միջազգային հարաբերությունները:

8. Անդամ պետությունները պետք է Համայնքի հաստատություններին ու կառույցներին ապահովեն տարածական տվյալների հավաքածուներից ու ծառայություններից օտվելու հնարավորությամբ՝ ներդաշնակեցված պայմաններին համապատասխան: Սույն Հրահանգում լրացում կատարելու միջոցով դրա ոչ էական տարրերը փոփոխելու համար նախատեսված պայմանները կանոնակարգող կիրարկման կանոնները պետք է ընդունվեն 22-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված՝ մանրամասն ուսումնասիրություն ներառող կարգավորիչ ընթացակարգին համապատասխան: Այդ կիրարկման կանոններով պետք է լիովին պահպանվեն 1-3-րդ մասերով սահմանված սկզբունքները:

ԳԼՈՒԽ VI

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԻՋՈՑՆԵՐ

Հոդված 18

Անդամ պետությունները պետք է ապահովեն համապատասխան կառույցների ու մեխանիզմների նախատեսումը՝ ուղղված բոլոր այն սուբյեկտների ունեցած ներդրումները կառավարման տարբեր մակարդակներում համակարգելուն, որոնք համապատասխան շահ են հետապնդում տարածական տեղեկատվության ենթակառուցվածքներում:

Այդ կառույցները պետք է համակարգեն, ի թիվս այլնի, օգտատերերի, արտադրողների, հավելյալ ծառայություններ մատուցողների եւ համակարգող մարմինների ունեցած ներդրումները՝ համապատասխան տվյալների հավաքածուների, օգտատերերի կարիքների հայտնաբերման, առկա փորձի վերաբերյալ տեղեկությունների տրամադրման եւ սույն Հրահանգի կիրարկման վերաբերյալ հետադարձ կարծիքի տրամադրման մասով:

Հոդված 19

1. Հանձնաժողովը պատասխանատու է ԵՀՏՏԵ-ն համայնքային մակարդակում համակարգելու համար, եւ այդ նպատակով դրան պետք է աջակցություն ցուցաբերեն համապատասխան կազմակերպություններն ու հատկապես՝ Եվրոպական բնապահպանական գործակալությունը:

2. Յուրաքանչյուր անդամ պետություն պետք է նշանակի կապն ապահովող սուբյեկտ, որպես կանոն՝ պետական մարմին, որը պատասխանատու կլինի սույն Հրահանգի մասով Հանձնաժողովի հետ կապն ապահովելու համար: Այդ կապն ապահովող սուբյեկտին պետք է օժանդակություն տրամադրի

համակարգման կառույցը՝ հաշվի առնելով անդամ պետությունում լիազորությունների ու պարտավորությունների բաշխումը:

Հոդված 20

Սույն Հրահանգով նախատեսված կիրարկման կանոններով պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն եվրոպական ստանդարտացման մարմինների կողմից թիվ 98/34/ԵՀ Հրահանգով սահմանված ընթացակարգի համաձայն ընդունված չափորոշիչները, ինչպես նաեւ միջազգային չափորոշիչները:

ԳԼՈՒԽ VII

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 21

1. Անդամ պետություններն իրականացնում են իրենց տարածական տեղեկատվության ենթակառուցվածքների ներդրման եւ օգտագործման նկատմամբ մոնիթորինգ: Դրանք Հանձնաժողովի եւ հանրության համար մշտական հիմունքներով մատչելի են դարձնում այդ մոնիթորինգի արդյունքները:

2. Անդամ պետությունները ոչ ուշ, քան մինչեւ 2010 թվականի մայիսի 15-ը Հանձնաժողով են ուղարկում հաշվետվություն, որը ներառում է հետեւյալի ամփոփ նկարագրությունը՝

   ա) պետական հատվածի մատակարարների եւ տարածական տվյալների հավաքածուների ու ծառայությունների օգտատերերի, ինչպես նաեւ

միջանկյալ կառույցների համակարգման եղանակը եւ երրորդ կողմի հետ ունեցած հարաբերություններն ու որակի ապահովման կազմակերպումը,

բ) տարածական տեղեկատվության ենթակառուցվածքի գործունեության եւ համակարգման հարցում պետական մարմինների կամ երրորդ կողմի ունեցած ներդրումը,

գ) տարածական տեղեկատվության ենթակառուցվածքի օգտագործման մասին տեղեկատվությունը,

դ) պետական մարմինների միջեւ տվյալների փոխանցման համաձայնագրերը,

ե) սույն Հրահանգի կիրարկումից բխող ծախսերն ու օգուտները:

3. Յուրաքանչյուր երեք տարին մեկ, ոչ ուշ, քան 2013 թվականի մայիսի 15-ից սկսած՝ անդամ պետությունները Հանձնաժողով են ուղարկում հաշվետվություն՝ տրամադրելով 2-րդ մասով նախատեսված հարցերի վերաբերյալ թարմացված տեղեկատվություն:

4. Սույն հոդվածի կիրարկմանն ուղղված մանրամասն կանոններն ընդունվում են 22-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված կարգավորիչ ընթացակարգին համապատասխան:

Հոդված 22

1. Հանձնաժողովին աջակցում է համապատասխան կոմիտեն:

2. Սույն մասին հղում կատարելու դեպքում կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ Որոշման 5-րդ եւ 7-րդ հոդվածները՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Թիվ 1999/468/ԵՀ Որոշման 5-րդ հոդվածի 6-րդ մասով նախատեսված ժամանակահատվածը սահմանվում է երեք ամիս:

3. Սույն մասին հղում կատարելու դեպքում կիրառվում են թիվ 1999/468/ԵՀ Որոշման հոդված 5ա-ի 1-4-րդ մասերը եւ 7-րդ հոդվածը՝ հաշվի առնելով դրա 8-րդ հոդվածի դրույթները:

Հոդված 23

Մինչեւ 2014 թվականի մայիսի 15-ը եւ այդուհետ յուրաքանչյուր վեց տարին մեկ Հանձնաժողովը պետք է Եվրոպական պառլամենտ եւ Խորհուրդ ներկայացնի սույն Հրահանգի կիրարկման մասին հաշվետվություն՝ հիմնելով, ի թիվս այլնի, անդամ պետություններից ստացված հաշվետվությունների վրա՝ 21-րդ հոդվածի 2-րդ եւ 3-րդ մասերի համաձայն:

Անհրաժեշտության դեպքում հաշվետվությունը պետք է ուղեկցվի Համայնքի գործողությունների վերաբերյալ առաջարկներով:

Հոդված 24

1. Մինչեւ 2009 թվականի մայիսի 15-ն անդամ պետությունների կողմից ուժի մեջ են մտնում սույն Հրահանգի պահանջների կատարման համար անհրաժեշտ օրենքները, կանոնակարգերը եւ վարչական ակտերը:

Անդամ պետությունների կողմից այդ միջոցներն ընդունելու դեպքում դրանք պետք է հղում պարունակեն սույն Հրահանգին կամ ուղեկցվեն նման հղումով դրանց պաշտոնական հրապարակման ժամանակ: Նման հղում կատարելու մեթոդները պետք է սահմանվեն անդամ պետությունների կողմից:

2. Անդամ պետությունները պետք է Հանձնաժողով ներկայացնեն ազգային օրենսդրության այն հիմնական դրույթների տեքստը, որը դրանք ընդունում են սույն Հրահանգով կարգավորվող ոլորտում:

Հոդված 25

Սույն Հրահանգն ուժի մեջ է մտնում Եվրոպական միության պաշտոնական տեղեկագրում հրապարակվելուց հետո *քսաներորդ օրը:*

Հոդված 26

Սույն Հրահանգը հասցեագրված է անդամ պետություններին:

Կատարված է Ստրասբուրգում 2007 թվականի մարտի 14-ին:

Եվրոպական պառլամենտի կողմից՝	*Խորհրդի կողմից՝*
Նախագահ	*Նախագահ*
Գ. ՓՈԹԵՐԻՆԳ	Հ.-Գ. ԳԼՈՍԵՐ

ՀԱՎԵԼՎԱԾ I

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Ա» ՄԱՍՈՎ, 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Ա» ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Համակարգել հղումների համակարգերը

Տարածական տեղեկատվության ինքնատիպ հղման համակարգեր՝ որպես կոորդինատների (x, y, z) խումբ եւ/կամ լայնություն, երկարություն ու բարձրություն՝ հիմնված գեոդեզիական հորիզոնական եւ ուղղաձիգ չափման տվյալների վրա:

2. Աշխարհագրական ցանցի համակարգեր

Ներդաշնակեցված բազմա-ռեզուլյացիոն ցանց՝ ծագման ընդհանուր կետով, ինչպես նաեւ ստանդարտացված տեղակայվածություն ու ցանցի բջիջների չափ:

3. Աշխարհագրական անվանումներ

Հանրային կամ պատմական նշանակության տարածքների, շրջանների, վայրերի, քաղաքների, արվարձանների, ավանների կամ բնակավայրերի անվանումներ կամ ցանկացած աշխարհագրական կամ տեղագրական բնութագրեր:

4. Վարչական միավորներ

Տարածքները բաժանող կառավարման միավորներ, որոնցում անդամ պետություններն օժտված են եւ/կամ իրականացնում են իրավազորությունից բխող իրավունքներ՝ ուղղված տեղական, շրջանային եւ պետական կառավարմանը, եւ որոնք առանձնացված են վարչական սահմաններով:

5. Հասցեներ

Հասցեների նույնականացման միջոցներով որոշվող գույքի տեղակայվածություն, սովորաբար՝ ըստ փողոցի անվանումների, տան համարների եւ փոստային դասիչների:

6. Կադաստրային հողամասեր

[Անշարժ] գույքի կադաստրի կամ համարժեք մարմնի կողմից սահմանված տարածքներ:

7. Տրանսպորտային ցանցեր

Ճանապարհային, երկաթուղային, օդային եւ ջրային տրանսպորտի ցանցեր եւ հարակից ենթակառուցվածքներ: Դրանք ընդգրկում են կապը տարբեր ցանցերի միջեւ: Դրանք ընդգրկում են նաեւ անդր-եվրոպական տրանսպորտային ցանցը՝ «Անդրեվրոպական տրանսպորտային ցանցի զարգացման վերաբերյալ Համայնքի ուղենիշների մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 1996 թվականի հուլիսի 23-ի թիվ 1692/96/ԵՀ որոշմամբ ([1]) եւ այդ որոշման հետագա վերանայված տարբերակներով սահմանված կարգով:

8. Ջրագրություն

Ջրագրական տարրեր, այդ թվում՝ ջրային տարածքներ եւ դրանց առնչվող մյուս բոլոր ջրային մարմիններն ու օբյեկտները, այդ թվում՝ գետավազաններն ու ենթաավազանները: Անհրաժեշտության դեպքում՝ «Ջրային քաղաքականության ոլորտում Համայնքի գործողության շրջանակ ձեւավորելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2000 թվականի հոկտեմբերի 23-ի թիվ 2000/60/ԵՀ հրահանգով ([2])նախատեսված սահմանումների համաձայն եւ ցանցերի տեսքով:

---

[1] ՊՏ թիվ L 228, 1996 թվականի սեպտեմբերի 9, էջ 1: Խորհրդի թիվ 1791/2006 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված որոշում (ՊՏ թիվ L 363, 2006 թվականի դեկտեմբերի 20, էջ 1):

[2] (ՊՏ L 327, 2000 թվականի դեկտեմբերի 22, էջ 1) Թիվ 2455/2001/ԵՀ որոշմամբ փոփոխված հրահանգ (ՊՏ L 331, 2001 թվականի դեկտեմբերի 15, էջ 1):

9. Պաշտպանվող վայրեր

Միջազգային, համայնքային եւ անդամ պետությունների օրենսդրական դաշտի շրջանակներում նշանակված կամ կառավարվող տարածքներ՝ պահպանության կոնկրետ նպատակների իրագործման համար:

_____

ՀԱՎԵԼՎԱԾ II

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Ա» ՄԱՍՈՎ, 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍՈՎ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Բ» ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Բարձրություն

Թվային բարձրության մոդելներ՝ հողերի, սառույցի եւ օվկիանոսի մակերեւույթի համար: Դրանք ընդգրկում են ցամաքային բարձրությունները, բաթիմետրիան եւ ծովափնյա տարածքները:

2. Հողի ծածկույթ

Երկրի մակերեւույթի ֆիզիկական եւ կենսաբանական ծածկ, այդ թվում՝ արհեստական մակերեսներ, գյուղատնտեսական տարածքներ, անտառներ, (կիսա-) բնական տարածքներ, ճահճացած տարածքներ եւ ջրային մարմիններ:

3. Օրթոպատկերներ

Երկրի մակերեւույթի մասին պատկերային տվյալներ՝ աշխարհագրական հղումով՝ կա՛մ արբանյակային, կա՛մ օդաքարշ տվիչներից:

4. Երկրաբանություն

Երկրաբանությունը բնութագրվում է ըստ կազմի եւ կառուցվածքի: Այն ընդգրկում է հիմնածայրը, ջրատար հորիզոնները եւ գեոմորֆոլոգիան:

ՀԱՎԵԼՎԱԾ III

6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Բ» ՄԱՍՈՎ ԵՎ 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ «Բ» ՄԱՍՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԲԱԺԻՆՆԵՐԸ

1. Վիճակագրական բաժիններ

Վիճակագրական տեղեկատվության տարածման կամ օգտագործման բաժիններ:

2. Շենքեր

Շենքերի աշխարհագրական տեղակայվածություն:

3. Հող

Հողը եւ ընդերքը, որոնք բնութագրվում են ըստ խորության, կազմի, կառուցվածքի եւ մասնիկների ու օրգանական նյութերի բաղադրության, քարքարոտության, էրոզիայի, անհրաժեշտության դեպքում՝ միջին թեքության եւ նախատեսված ջրակուտակման ունակության:

4. Հողօգտագործում

Տարածք, որը բնութագրվում է ըստ վերջինիս ընթացիկ եւ հետագա պլանավորված շահագործման չափի կամ սոցիալ-տնտեսական նպատակի (օրինակ՝ բնակելի, արդյունաբերական, առեւտրային, գյուղատնտեսական, անտառային, ժամանցային):

5. Մարդու առողջություն եւ անվտանգություն

Ախտաբանության գերակայության աշխարհագրական բաշխումը (ալերգիա, քաղցկեղ, շնչառական հիվանդություններ եւ այլն), մարդկանց առողջության (կենսաբանական ցուցիչներ, պտղաբերության նվազում, համաճարակներ) կամ բարեկեցության (հոգնածություն, սթրես եւ այլն) վրա ազդեցությունը նկարագրող տեղեկատվություն, որն ուղղակիորեն (օդի աղտոտում, դեղամիջոցներ, օզոնային

շերտի քայքայում, աղմուկ եւ այլն) կամ անուղղակիորեն (սննդամթերք, գենետիկորեն փոփոխված օրգանիզմներ եւ այլն) կապված է շրջակա միջավայրի որակի հետ:

6. Կոմունալ եւ պետական ծառայություններ

Դրանք ընդգրկում են կոմունալ այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են կոյուղին, թափոնների կառավարումը, էներգամատակարարումը եւ ջրամատակարարումը, ինչպես նաեւ կառավարման ու սոցիալական պետական ծառայությունները, ինչպիսիք են պետական կառավարումը, քաղաքացիական պաշտպանության կայքերը, դպրոցներն ու հիվանդանոցները:

7. Շրջակա միջավայրի մոնիթորինգի օբյեկտներ

Շրջակա միջավայրի մոնիթորինգի օբյեկտների տեղակայվածությունը եւ շահագործումը ներառում են արտանետումների, ինչպես նաեւ բնապահպանական միջավայրի վիճակի ու էկոհամակարգի այլ պարամետրերի (կենսաբազմազանություն, բուսականության էկոլոգիական պայմաններ եւ այլն) հետազոտումն ու չափորոշումը պետական մարմինների կողմից կամ դրանց անունից:

8. Արտադրական եւ արդյունաբերական օբյեկտներ

Արդյունաբերական արտադրամասեր, այդ թվում՝ «Աղտոտման միասնական կանխարգելման ու վերահսկողության մասին» Խորհրդի 1996 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 96/61/ԵՀ հրահանգով կարգավորվող սարքավորումներ ([1]) եւ ջրհավաք օբյեկտներ, հանքարդյունաբերություն, պահեստավորման վայրեր:

9. Գյուղատնտեսական եւ ջրային կենդանիների բուծման օբյեկտներ

Գյուղատնտեսական սարքավորումներ եւ արտադրական օբյեկտներ (այդ թվում՝ ոռոգման համակարգեր, ջերմոցներ եւ ախոռներ):

---

[1] ՊՏ թիվ L 257, 1996 թվականի հոկտեմբերի 10, էջ 26: Եվրոպական խորհրդարանի եւ Խորհրդի թիվ 166/2006 կանոնակարգով (ԵՀ) վերջին անգամ փոփոխված հրահանգ (ՊՏ L 33, 2006 թվականի փետրվարի 4, էջ 1):

10. Բնակչության բաշխում. ժողովրդագրություն

Մարդկանց աշխարհագրական բաշխումը, այդ թվում՝ բնակչության բնութագրիչները եւ ակտիվության մակարդակը՝ ագրեգացված ըստ ցանցի, շրջանի, վարչական միավորի կամ այլ վերլուծական միավորի:

11. Տարածքի կառավարման/արգելված/կարգավորման գոտիներ եւ հաշվետվություն ներկայացնող միավորներ

Կառավարվող, կարգավորվող կամ միջազգային, եվրոպական, ազգային, տարածաշրջանային ու տեղական մակարդակներում հաշվետվություն ներկայացնելու համար օգտագործվող տարածքներ: Դրանք ընդգրկում են աղբավայրերը, խմելու ջրի աղբյուրների շրջակայքում արգելված գոտիները, նիտրատի նկատմամբ խոցելի գոտիները, կարգավորվող նավարկուղիները ծովերում կամ մեծ կղզիների ջրերում, թափոնների թաղման վայրերը, աղմուկի սահմանափակման գոտիները, հետախուզման եւ արդյունահանման թույլատրելի տարածքները, գետավազանների տարածքները, համապատասխան հաշվետվություն ներկայացնող միավորները եւ ափամերձ գոտիների կառավարման տարածքները:

12. Բնական ռիսկերի գոտիներ

Խոցելի տարածքներ, որոնք բնութագրվում են ըստ բնական աղետների (բոլոր մթնոլորտային, ջրաբանական, սեյսմիկ, հրաբխային եւ հրդեհային երեւույթները, որոնք իրենց տեղակայվածության, ուժգնության եւ հաճախականության պատճառով ունեն հասարակության վրա լուրջ ազդեցություն թողնելու հավանականություն), օրինակ՝ ջրհեղեղներ, սողանքներ եւ իջվածքներ, տարափներ, անտառային հրդեհներ, երկրաշարժեր, հրաբխային ժայթքումներ:

13. Մթնոլորտային պայմաններ

Ֆիզիկական պայմաններ մթնոլորտում: Դրանք ընդգրկում են տարածական տվյալներ՝ չափագրումների, մոդելների կամ այդ երկուսի համակցության հիման վրա, ինչպես նաեւ ընդգրկում են չափագրման վայրեր:

14. Օդերեւութաբանական աշխարհագրական բնութագրեր

Եղանակային պայմաններ եւ դրանց չափումներ. տեղումներ, ջերմաստիճան, գումարային գոլորշիացում, քամու արագություն եւ ուղղություն:

15. Օվկիանոսագրական աշխարհագրական բնութագրեր

Օվկիանոսների ֆիզիկական վիճակը (հոսանքներ, աղիություն, ալիքների բարձրություն եւ այլն):

16. Ծովային շրջաններ

Ծովերի ֆիզիկական վիճակը եւ աղի ջրային օբյեկտները բաժանվում են շրջանների եւ ենթաշրջանների, որոնք ունեն ընդհանուր բնութագրիչներ:

17. Կենսաաշխարհագրական շրջաններ

Ընդհանուր բնութագրիչներ ունեցող համեմատաբար միասեռ էկոլոգիական պայմաններով տարածքներ:

18. Միջավայրեր եւ բիոտոպեր

Աշխարհագրական տարածքներ, որոնք բնութագրվում են հատուկ էկոլոգիական պայմաններով, գործընթացներով, կառուցվածքով եւ (կենսագործունեության) գործառույթներով, որոնք ֆիզիկապես օժանդակում են այնտեղ ապրող օրգանիզմներին: Դրանք ընդգրկում են իրենց աշխարհագրական, աբիոտիկ եւ բիոտիկ առանձնահատկություններով տարբերվող ցամաքային եւ ջրային տարածքներ՝ անկախ ամբողջությամբ բնական կամ կիսաբնական լինելու հանգամանքից:

19. Տեսակների բաշխում

Կենդանիների եւ բույսերի տեսակների առաջացման աշխարհագրական բաշխում՝ ըստ ցանցի, շրջանի, վարչական միավորի կամ այլ վերլուծական միավորի:

20. Էլեկտրաէներգիայի ռեսուրսներ

Էլեկտրաէներգիայի ռեսուրսներ, այդ թվում՝ ածխաջրածինները, հիդրոէներգիան, կենսաէներգիան, արեւային, հողմային [էներգիան] եւ այլն՝ անհրաժեշտության դեպքում ներառելով համապատասխան խորության/բարձրության մասին տեղեկատվություն՝ ռեսուրսի ծավալների մասին:

21. Հանքային ռեսուրսներ

Հանքային ռեսուրսներ, այդ թվում՝ մետաղների հանքաքարեր, արդյունաբերական հանքանյութ եւ այլն՝ անհրաժեշտության դեպքում ներառելով համապատասխան խորության/բարձրության մասին տեղեկատվություն՝ ռեսուրսի ծավալների մասին: